# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե : , ՀՀ, ՄԵԾԱՄՈՐ 172
Հեռախոս: 34441
Ֆաքս: 34441

Ելից
03 ապրիլի 2012թ.
Ձեր

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ եմ ներկայացնում Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու թիվ 02 նիստի արձանագրության թիվ 12-Ն որոշման քաղվածքը:

Առդիր՝ 59 թերթ:

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ ԱՔ/3262-12
«06» 04 2012 թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 02 նիստի արձանագրության

թիվ 12-Ն որոշումից, կայացած 2012 թվականի մարտի 26-ին

## ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 07 նիստի «Մեծամոր քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

1)Վարչական բյուջեի եկամտային մասում 2012 թվականի նախատեսված դոտացիայի թիվը /132030,0/ հազար դրամ փոխարինել /132012,7/ հազար դրամ, այլ եկամուտների մասով՝ մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող այլ վճարներ /2300,0/ հազար դրամ փոխարինել /2317,3/ հազար դրամ, նախատեսնել պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիա/ 1722,2 հազար դրամ՝ արվեստի դպրոցում ազգային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցում:

2)Վարչական բյուջեի ծախսային մասում «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 5, դաս 1 4637 հոդվածով նախատեսնել 1722,2 հազար դրամ, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 250,0 հազար դրամ ուղղել «Ընդհանուր բնույթի ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 3, դաս 2 4232 հոդվածին, 2750,0 հազար դրամ ուղղել Ֆոնդային բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն ծրագրի բաժին 08, խումբ1, դաս1, 5112 հոդվածին՝ հանգստի գոտում խորքային հոր կառուցելու համար, «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10, խումբ 7, դաս 1, 4729 հոդվածից պակասեցնել 50,0 հազար դրամ և ավելացնել «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 4, դաս 1, 4729 հոդվածին 50,0 հազար դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | |
|---|---|---|
| Առաքելյան | Ժան | Ժիրայրի |
| Արտենյան | Արմեն | Ռուբենի |
| Երանոսյան | Արտակ | Սասունիկի |
| Զաքարյան | Աշոտ | Ազատի |
| Հովհաննիսյան | Գևորգ | Հենրիկի |
| Ղազարյան | Արմեն | Սլավիկի |
| Մկրտչյան | Աշոտ | Մկրտչի |
| Մովսիսյան | Արմենակ | Արմենակի |
| Սահակյան | Սերգեյ | Ալեքսանդրի |
| Փանոսյան | Մնացական | Վոլոդիայի |
| Փոթուրյան | Մեսրոպ | Խաչիկի |

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ